ՄԵԾԱԼՐՄԱՆ ԵՐԵԿՈ

Լրջագույն ուսումնական հայագետ, Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարապետ Մելիք-Օհանջանյանի ծննդյան 70 և գիտական գործունեության 50-ամյակը Այդ առթիվ Մաշտոցի անվան Մատենադարանի նիստերի դահլիճում 1963 թ. մարտի 12-ին տեղի ունեցավ մեծարման երեկո, որին մասնակցեցին Երևանի գիտական հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ։ Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանի բացման խոսքից հետո պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի կյանքի և գիտական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ բանասեր Ա. Ղանալանյանը։ Հանդամանորեն վերլուծելով Կ. Մելիք-Օհանջանյանի բազմաժյա ու բեղմնավոր մանկավարժական-հաստատչական, գիտա-վարչական ու գիտա-ստեղծագործական կյանքի տարեգրությունը, զեկուցողը առանձնապես նշեց նրա մեծ ծառայությունները հայ ժողովրդական էպոսի՝ «Մասունքի Դավթի» տարբերակների հայտնագործման, էպոսի համահավաք բնագրի մշակման ու տպագրության շնորհակալ գործում։ Պրոֆ. Մելիք-Օհանջանյանի բանագիտական, աղբյուրագիտական ու գրականագիտական բազմաթիվ աշխատությունները, մասնավորապես «Ծիրդուսին և Իրանի գիպական մոտիվները «Ճաշ-նամեում» ու հայ մատենագրության մեջ» (1934), «Լենին ֆոլկլորի մեջ» (1936), «Միթրա-Միհրը Սասնա ծռերի մեջ» (1946), «Տիրան-Տրդատի վեպը բուն Փավստոս Բուզանդի» (1947), Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» քննական-համեմատական բնագիրը (1961) և այլն, կարևոր ներդրում են հայագիտության մեջ։

Հատկապես մեծ է նրա վաստակը Սովետական Հայաստանի հայագիտական մի շարք հիմնարկությունների ստեղծման ու զեկավարության, գիտական կադրերի պատրաստման գործում։

Պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանին ծննդյան 70 և գիտական գործունեության 50-ամյակի առթիվ ջերմորեն ողջունեցին Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը (Հայկ. ՍՍՌ ԳԱ հասարակագիտական բաժանմունքի կողմից), պրոֆ. Ն. Տեր-Միքայելյանը (լեզվի ինստիտուտ), գիտության վաստակավոր գործիչ Խ. Սարգսյանը (Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ), Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ս. Երեմյանը (պատմության ինստիտուտ), արվեստագիտության դոկտոր Ռ. Զարյանը (արվեստի ինստիտուտ), Է. Պիմոյանը (Պետական համաշխարհային), Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը (Խ. Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտ), Ա. Նազինյանը (հնագիտության և ազգագրության ինստիտուտ), Հ. Ինճիկյանը (արևելագիտության սեկտոր), Հաշիմ Ջնդին (արևելագիտության սեկտորի բրդագիտական խումբ և Դրոզների մթության բրդական սեկցիա), Վ. Նորենցը (Դրոզների մթություն), Վ. Դավթյանը («Գրական թերթ» և «Սովետական գրականություն»), Գ. Ասատրյանը (գրականության և արվեստի թանգարան), Ն. Ավագյանը (պատմության թանգարան), Գ. Արզումանյանը (Մատենադարան), Ս. Հալաֆարյանը (Մատենադարանի բնագրագիտական սեկտոր), պրոֆ. Ռ. Հովհաննիսյանը (Հարելյարի աշակերտների կողմից)։ Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ Հարելյարը։

Վ. Գ.

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Փարիզից մեզ հայտնում են, որ 1963 թ. վերսկսվելու է „Revue des Études Arméniennes" հայագիտական հանդեսի հրատարակությունը (հանդեսը հիմնադրվել էր Ա. Մեյեի և Ֆ. Մակլերի կողմից 1920 թ. և տպագրվում էր մինչև 1933 թ.)։ Պարբերականի խմբագրական կոլեգիայի մեջ մտնում են հայանի հայագետներ Ե. Բենվենիստը, Կ. Կահենը, Մ. Կանարը, Ժ. Դյումեզիլը, Ա. Դյուպոն-Սոմմեր, Ֆ. Ֆեյդին, Ա. Գրաբարը, Պ. Լեմերլը, Շ. Մերսիեն, Ա. Միրամբելը և Լ. Ռոբերը։ Գլխավոր խմբագիրն է Ե. Բենվենիստը, խմբագրության բարտուղարը՝ Հայկ Բերբերյանը։

Հանդեսում լուսաբանվելու են լեզվաբանության, բանասիրության, պատմության, հնագիտության, սոցիոլոգիայի և էթնոգրաֆիայի պրոբլեմները, ինչպես նաև հայ ժողովրդի կուլտուրական կապերը հարևան ժողովուրդների հետ։ Հատուկ տեղ է հատկացվելու Սովետական Հայաստանում հայագիտության գծով լույս տեսած այն աշխատություններին, որոնք անծանոթ են մնացել արևմուտքի գիտնականներին։

Նենթագրվում է, որ նոր պարբերականի առաջին հատորը լույս կտեսնի այս տարվա աշնանը։